

յին մտերմութիւն կար սօցիալիստ Դաշնակցա- կանի եւ մեծ կապիտալիստ փաշայի մը՝ հետ...

Այդ դադարաւարային մտերմութիւնը ընդ- հանուր խնդիրներու շուրջը՝ կար նաեւ Լե- հաստանի, Չեխօսլովակիայի կուսակցութիւն- ներու եւ հոսանքներու միջեւ, երբ կ'արծարծ- ուէր լեհ եւ չեխ երկիրներու անկախութեան հարցը: Եւ լեհ ու չեխ մարքսիստները չէին, որ կը դատապարտէին այդ՝ մեր տնարոյս ծայրայեղներուն պէս:

Ասոնք կ'ուզէն ամէն պարագայի ցուցարե- րել հայ աշխարհին իրենց «նոր պատգամը»... այն՝ որ բանուորութիւնը, պրոլետարիատը միայն կարող էր իրօք ազատագրել Հայաստա- նը — եւ ազատագրեց: Անշուշտ, Լեհաստանը, Չեխօսլովակիան, Արաբիան ազատ ու անկախ չեն, վասնզի հոն ալ բանուորութիւնը չէր, որ կը ղեկավարէր ազգային շարժումը, այլ մեծ մասամբ «արտօնեալներն ու շահագործողնե- րը»...

Ինչպէ՞ս եղաւ, որ այդ վերջինները յաջո- դութիւն ունեցան, իսկ մեր արտօնեալները ոչ:

Որովհետեւ չեխերուն ու լեհերուն ազա- տութեան դաշնագիրները տրուելէ յետոյ, ա- նոնց հանդէպ չկար Լէնին մը, որ երթար պատ- ուէր այդ դաշնագրերը, վերստին մղէր չեխ ու լեհ ազգերը դէպի ստրկութիւն:

Կրնա՞ր Անանուն գուշակել 1918-ին «հին պատգամը» իրագործուելէն յետոյ, կրնա՞ր գուշակել, որ ընդամէնը երկու տարի վերջը Հայաստանը պիտի յօշոտուէր ու փոշիանար Լէնինիզմի եւ Քեմալիզմի բիրտ սանդալներուն տակ:

Կամ այս ներկայ խոշորացուցային Հա- յաստանը կը գոհացնէ՞ Անանունին: Այդ Հա- յաստանը, որ խոշտանգուելէ յետոյ ազատու- թեան գերեզման դարձած է...

Ըստ երեւոյթին, կը գոհացնէ, քանի որ նա բերանարաց խանդավառութեամբ կ'օրհնէ Հայաստանի ազատարարը:

Իսկ ո՞վ է այդ ազատարարը.

— Ռուսական Յեղափոխութիւնը եւ բան- ուորութիւնը, կ'ըսէ Անանուն:

Այսինքն՝ այն ոյժերը, որոնք Հայաստա- նի մէջը ջարդեցին, գոհաբերելով հայ ժո- դովուրդը ոռւս-թիւրքական բարեկամութեան եւ համաշխարհային յեղափոխութեանը...

Ռուսական յեղափոխութիւնը թիկո՞ւնք կանգնեց հային*)...

Ո՛չ, նա փորեց գերեզման մը, ուր հայ ժողովուրդը քիչ մնաց որ թաղուէր ոտ ու ձեռ- քով:

Այդ ժողովուրդը շուտ պիտի մոռնար ան- դամ 1915-ի սասանեցուցիչ ողբերգութիւնը, շուտ պիտի շտկէր իր մէջը, եթէ գէթ 1917-էն յետոյ հանդիստ ճգէին զինքը եւ թող տային, որ դրաւէ իր բնական սահմանները թիւրքա- հայաստանում կամ գէթ 1914-ի սահմանները:

Ռուսական յեղափոխութիւնը, հոկտեմ- բերեան, բանուորական զուտ ոռուսական, այս- ինքն՝ բօսնակային յեղափոխութիւնը, խոր- տակեց անգամ այդ համեստ երազները, հապ- ճեպով դուրս քաշեց ոռուս զօրքը թիւրքահա- յաստանէն, գաղանի երախը նետեց ուրիշ զանգուածներ կիսամեռ հայ ժողովուրդէն, ապա միացած այդ գաղանի հետ, անդամահատեց մեր երկիրը եւ առատօրէն հայկական հողեր ընծայեց թիւրքին, թաթարին, վրացուն, կըշ- տացներով բոլոր դրացիները ի հաշիւ Հայաս- տանի եւ թողնելով հայ երկիրն մերկ, երբեուն կմախք մը:

Եւ ոռուս յաղթական ու բօլշեվիկ պրոլե- տարիատը, որու փառաբանութիւնը կ'ընէ Ա- նանուն հորթային բերկրանքով մը, հակառակ իր «անկախութեան» յաւակնութիւններուն և ոռուս բօլշեվիկ տէրերու այդ բոլոր սխրագոր- ծութիւններուն, այսօր հեռաւոր ճիգ մ'իսկ չըներ՝ գէթ փոքր ինչ ընդլայնելու այն անձուկ ու խեղդուկ հողամասը, ուր հայ աշխատաւոր եւ ստեղծագործող ժողովուրդը շնչահեղձ կը լինի... Վասնզի կը խորհի — մեր պատմագրին պէս — որ հայկական խնդիրը լուծուած է արդէն...

Եթէ Անանունները բթացած խղճի մը թե- լադրանքով կը մոռնան այս արիւնոտ իրողու- թիւնները, մենք երբեք չենք մոռնար:

Եթէ ասոնք կը փառաբանեն ոռուս «յեղափո- խական պրոլետարիատի» բուռնքը, մենք պի- տի շարունակենք որակել բօլշեվիկ Ռուսաս- տանը, որպէս դահլճ, կրկնակի ու եռակի դահլճ, վասնզի ան կուգայ սօցիալիզմի անու- նով:

*) Իր բառերն են. տե՛ս էջ 693